

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Մաթեմատիկայի և ինֆորմատիկային ամբիոն  
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Օհանյան Հ.Հ.

Արձանագրություն № 3

« 14 » սեպտեմբեր 2023 թ.

ՄԻ/բ-152-Ինֆորմացիոն տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ **ԴԱՍԸՆԹԱՑԻ**  
Դասիչ, դասընթացի անվանում

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ**

Մասնագիտություն՝

041301.00.6 «Կառավարում»

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

041301.01.6 \_ «Կառավարում»

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման  
աստիճան՝

կառավարման բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝

**Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի**

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝

առկա

/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ

3/5 առկա

Դասախոս(ներ)՝

**Լ Սարուխանյան**

/անուն, ազգանուն/

Էլ հասցեներ

lussar70@gmail.com

Վանաձոր- 2023թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
  - 12 1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
  - 12 2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
  - 12 3 Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
  - 12 4 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
  - 14 1 Ուսանողների գիտելիքների ստուգում
  - 14 2 Հարցաշար
  - 14 3 Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում<sup>1</sup>

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ» դասընթացը կարևորվում է տնտեսագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 041301.01.6 \_ «Կառավարում» կրթական ծրագրի ուսումնական պլանի ,Հատուկ մասնագիտական կրթամասում:

### 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

#### 2.1. Դասընթացի նպատակն է

- Տնտեսագիտության մեջ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառության տեսական հիմքերի ուսուցում
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ծրագրային, ապարատային, ցանցային հնարավորությունները տնտեսագիտության մեջ կիրառելու հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:

#### 2.2. Դասընթացի խնդիրներն են

- Սովորեցնել տեղեկատվական տեխնոլոգիաների տեսական հիմքերը
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել մասնագիտական բնույթի ինֆորմացիայի ուսումնասիրություններ, հետազոտություններ, և արդյունքների վերլուծում տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով

### 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների համակարգչի հետ աշխատանքի նախնական գիտելիքների և հմտությունների առկայությունը

### 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը<sup>2</sup> և /կամ կոմպետենցիաները

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա տեղեկատվական տեխնոլոգիաների տեսական հիմունքները

<sup>1</sup> Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբովանդակության

<sup>2</sup> <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

2. իմանա տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունները տնտեսագիտության մեջ

3. կարողանա ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքները կիրառել մասնագիտական գործունեության մեջ

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների<sup>3</sup>**

Տեղեկատվական տեխնոլոգիաների դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել տնտեսության տարբեր ոլորտներում մասնագիտական գործունեության ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և տնտեսագիտության տարբեր բնագավառներում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

**6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	4 կրեդիտ/120 ժամ	

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն	24	
Գործնական աշխատանք		
Մեմինար պարապմունք		
Լաբորատոր աշխատանք	32	
Ինքնուրույն աշխատանք		
<b>Ընդամենը</b>	64	
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ընթացիկ քննություն	

**7. Ուսումնական աշխատանքների տեսակները<sup>4</sup>**

<sup>3</sup> Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

<sup>4</sup> Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդալրգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են<sup>5</sup>

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրվող, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր,

<sup>5</sup> Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ձեռնարկներ և այլն):

- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներն են**<sup>6</sup> հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր

9. **Ուսումնառության մեթոդներն են**<sup>7</sup>՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում

---

<sup>6</sup> Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

<sup>7</sup> Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների<sup>8</sup>.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապլունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ծրագրային և ապարատային միջոցների ընդհանուր բնութագիրը: Ինֆորմացիոն հասարակություն: Ինֆորմացիայի հատկությունները, տնտեսագիտական ինֆորմացիայի առանձնահատկությունները: Տվյալներ և ինֆորմացիա հասկացությունները, նրանց դերը և նշանակությունը տնտեսական համակարգում: Տնտեսագիտական ինֆորմացիայի կառուցվածքը	2				
2.	Տնտեսագիտական ինֆորմացիայի վերլուծություն, ներկայացում, մշակում և հրատարակում MS Office ծրագրային փաթեթի միջոցներով	8				
3.	Ինֆորմացիայի համակարգերի բնութագրումն ու կառուցվածքը, տեսակները, ֆունկցիոնալ ենթահամակարգերը: Տվյալների հենքեր, մասնագիտացված տվյալների հենքերի կառավարման համակարգեր:	8				
4.	Կառավարման տեղեկատվական համակարգերի տեսակներ: Կառավարման տեղեկատվական համակարգերի ղեկավարման ծրագրեր(MS Project ծրագրային փաթեթ)	2				
5.	Հեռահաղորդակցական համակարգեր, դրանց կիրառությունը տնտեսության կառավարման ու կազմակերպման բնագավառում:	4				
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>24</b>				

<sup>8</sup> Նման է օրացուցային պլանին

**11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
<b>Պարտադիր գրականություն (ՊԳ)</b>		
1.	Շ.Դ.Համբարձումյան, Ինֆորմացիոն համակարգեր և տեխնոլոգիաներ	
2.	Ս.Գյուլումյան, Ա.Գալանտերյան, Մ.Պողոսյան, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ, Երևան	2016
3	Ս Է Կոստեյան, Ա Ժ Սմբատյան, Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Երևան	
4	И.С. Осетрова УПРАВЛЕНИЕ ПРОЕКТАМИ в Microsoft Project, Учебное пособие, Санкт-Петербург	2013
<b>Լրացուցիչ գրականություն(ԼԳ)</b>		
1.	Т. П. Барановская - Информационные системы и технологии в экономике	
2	MICROSOFT PROJECT 2016 MANAGING PROJECTS	2016
<b>Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)</b>		
1.	<a href="https://www.youtube.com/watch?v=TgE0ANwovBc">https://www.youtube.com/watch?v=TgE0ANwovBc</a>	
2.		

**12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ**

**12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ**

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն <sup>9</sup>
1.	<i>Ինֆորմացիայի հասարակություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ինֆորմացիոն հասարակություն: Ինֆորմացիայի հատկությունները, տնտեսագիտական ինֆորմացիայի առանձնահատկությունները:</i>	Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ծրագրային և ապարատային միջոցների ընդհանուր բնութագիրը: Ինֆորմացիայի հատկությունները, տնտեսագիտական ինֆորմացիայի առանձնահատկությունները: Տվյալներ և ինֆորմացիա հասկացությունները, նրանց դերը և	2	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

<sup>9</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, որ.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն



		նշանակությունը տնտեսական համակարգում: Տնտեսագիտական ինֆորմացիայի կառուցվածքը		
2.	Տեղեկատվական համակարգեր: Կառավարման տեղեկատվական համակարգերի տեսակներ	Ծանոթացում կազմակերպությունների կառավարման համակարգեր Oracle, 1C հետ		ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
	Տվյալների հենքեր, տվյալների հենքերի կառավարման համակարգեր	զաղափար տվյալների տիպերի, կառուցվածքների մասին		ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
	Հեռահաղորդակցական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը տնտեսագիտության մեջ	Հեռահաղորդակցական ցանցային՝ հիմնային տեխնոլոգիաներ Համակարգչային ցանցերի տեսակները Տվյալների փոխանակման արձանագրությունները Ինտերնետում: Ինտերնետի ծառայությունները և տեղեկատվական պաշարները Ինֆորմացիայի որոնման սկզբունքները Ինտերնետում		ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

## 12.2. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամա քանակ	Ստուգման ձևը	Գրականություն <sup>10</sup>
1.	Ընդհանուր նշանակության կիրառական ծրագրային փաթեթների (MS Office) կիրառությունը տնտեսագիտության մեջ	Տեքստային ինֆորմացիայի մշակում և թղթաբանության ձևավորում և մշակում Ms Word -ի միջոցով: Տնտեսական ինֆորմացիայի վերլուծություն և	12	Լաբորատոր աշխատանք Էլեկտրոնային տեսքով	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3

<sup>10</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		մշակում աղյուսակային պրոցեսորի MS Excel ծրագրային միջոցներով Տնտեսագիտական խնդիրների լուծում MS Excel ծրագրով: Մտատիստիկ, ժամանակային, տեքստային, մաթեմատիկական, տնտեսագիտական ֆունկցիաներ, ֆիլտրներ, ենթահանրագումարային տողեր(Subtotal), ամփոփիչ աղյուսակներ(Pivot Table)			
	Տվյալների հենքեր, տվյալների հենքերի կառավարման համակարգեր	MS Access ծրագրային ապահովման: Տնտեսական մոդելի կառուցում տվյալների հենքի ղեկավարման ծրագրի միջոցներով	12	Լաբորատոր աշխատանք էլեկտրոնային տեսքով	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3
2.	Կառավարման համակարգի կառուցվածքը:	Աշխատանք նախագծերի կառավարման Ms Project համակարգով	4	Լաբորատոր աշխատանք էլեկտրոնային տեսքով	ՊԳ4 ԼԳ1
	Հեռահաղորդակցական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը տնտեսագիտության մեջ	Ցանցերի կառուցման ծրագրային և տեխնիկական միջոցները: Հեռահաղորդակցական ցանցային հիմնային տեխնոլոգիաներ Համակարգչային ցանցերի տեսակները Տվյալների փոխանակման արձանագրությունները Ինտերնետում Ինտերնետի ծառայությունները և տեղեկատվական պաշարները Ինֆորմացիայի որոնման սկզբունքները Ինտերնետում	4	Լաբորատոր աշխատանք էլեկտրոնային տեսքով	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3

### 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը <sup>11</sup>	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն <sup>12</sup>
1.	Թղթաբանության էլեկտրոնային ձևերի մշակում և իրականացում	Թղթաբանության էլեկտրոնային ձևերի մշակում և իրականացում տեքստային խմբագրիչի միջոցով	էլեկտրոնային	1 ամիս	Լաբորատոր աշխատանք էլեկտրոնային տեսքով	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3
2.	Տնտեսական ինֆորմացիայի վերլուծություն և մշակում աղյուսակային պրոցեսորի MS Excel ծրագրային միջոցներով	Տնտեսագիտական խնդիրների լուծում MS Excel ծրագրով: Ստատիստիկ, ժամանակային, տեքստային, մաթեմատիկական, տնտեսագիտական ֆունկցիաներ, ֆիլտրներ, ենթահանրագումարային տողեր(Subtotal), ամփոփիչ աղյուսակներ(Pivot Table)	էլեկտրոնային	1 ամիս	Լաբորատոր աշխատանք էլեկտրոնային տեսքով	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3
3.	Տվյալների հենքեր, տվյալների հենքերի կառավարման համակարգեր, Ms Access	Տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող տվյալների հենքի ինքնուրույն կառուցում	էլեկտրոնային	1 ամիս	Լաբորատոր աշխատանք էլեկտրոնային տեսքով	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3

### 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում<sup>13</sup>

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Համակարգչային լսարան
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Պրոյեկտոր, ներքին ցանց, ինտերնետ կապով

<sup>11</sup> Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

<sup>12</sup> Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

<sup>13</sup> Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

Համակարգչային ծրագրեր	Ms Office, Ms Project
Այլ	

## 14. Գնահատում

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունաբար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում

Դասընթացն ամփոփվում է քննությամբ :

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

### 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

#### ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ծրագրային միջոցներ
3. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ապարատային միջոցներ
4. Ինֆորմացիոն համակարգեր, սահմանումը, տեսակները
5. Ինֆորմացիոն հասարակություն: Տնտեսական ինֆորմացիա
6. Կառավարման համակարգի կառուցվածքը
7. Տվյալների մոդելներ
8. Տեքստային, ժամանակային ֆունկցիաներն և դրանց կիրառությունը ինֆորմացիոն մոդելներում
9. Վիճակագրական, տրամաբանական ֆունկցիաներն և դրանց կիրառությունը ինֆորմացիոն մոդելներում
10. Ֆինանսական ֆունկցիաներն և դրանց կիրառությունը ինֆորմացիոն մոդելներում
11. Ենթահանրագումարային տողեր( Subtotals)
12. Ամփոփոյ աղյուսակների հետ աշխատանք(Pivot Table)
13. Աղյուսակների ձևավորում Conditional Formatting գործիքախմբի միջոցով
14. Տվյալների վերլուծություն և բարդ դիագրամների կառուցում:
15. Տվյալների հենքի տրամաբանական և կոնցեպտուալ նախագծումը և ֆիզիկական իրականացումը:
16. Առարկայական տիրույթ և նրա մոդելավորումը:
17. Տվյալների հենքի ղեկավարման համակարգ MS Access:
18. Աղյուսակներ

19. Հարցումներ
20. Ձևեր
21. Հաշվետվություններ
22. Համակարգչային ցանցերի տեսակները
23. Ցանցերի կազմակերպման տեխնիկական միջոցներ
24. Ցանցերի կազմակերպման ծրագրային միջոցներ
25. Տվյալների փոխանակման արձանագրությունները:
26. Ինտերնետում Ինտերնետի ծառայությունները և տեղեկատվական պաշարները  
Ինֆորմացիայի որոնման սկզբունքները Ինտերնետում
27. Նախագծերի պլանավորման համակարգեր MS Project:

#### 27.1. Գնահատման չափանիշները<sup>14</sup>.

##### 14.4. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝ առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

**,ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

<sup>14</sup> Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

## ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝

041301.00.6 «Կառավարում»

դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

041301.01.6 \_ «Կառավարում»

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման  
աստիճան՝

կառավարման բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

//

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը,  
անվանումը

ՄԻ/Բ-152 Ինֆորմացիոն տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ

Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	3-ին տարի, 5-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	56	Դասախոսություն	24
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	32
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	64		
Ընդամենը	120			
Ստուգման ձևը	Ընթացիկ քննություն			
Դասընթացի նպատակը	<ul style="list-style-type: none"> <li>• Տնտեսագիտության մեջ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառության տեսական հիմքերի ուսուցում</li> <li>• Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ծրագրային, ապարատային, ցանցային հնարավորությունները տնտեսագիտության մեջ կիրառելու հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:</li> </ul>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><b>Գիտելիք</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումը տնտեսագիտության մեջ</li> </ul> <p><b>Հմտություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղեկատվական տեխնոլոգիաների ապարատային և ծրագրային միջոցների կիրառությունը մասնագիտական բնույթի գործնական կիրառությունների, ինչպես նաև հետազոտական աշխատանքների կատարման և արդյունքների վերլուծության համար</li> </ul> <p><b>Կարողունակություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումը տնտեսագիտության մեջ</li> </ul>			
Դասընթացի բովանդակությունը	<p>Թեմա 1` Ինֆորմացիայի հասարակություն, տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային և ապարատային միջոցների ընդհանուր բնութագիրը: Ինֆորմացիայի հատկությունները, տնտեսագիտական ինֆորմացիայի առանձնահատկությունները: :</p> <p>Թեմա 2` Տեղեկատվական համակարգերի բնութագրումն ու կառուցվածքը, տեսակները, ֆունկցիոնալ ենթահամակարգերը: Տվյալների հենքեր, մասնագիտացված տվյալների հենքերի կառավարման համակարգեր:</p> <p>Թեմա 3 Տնտեսական տեղեկույթի վերլուծություն, ներկայացում, մշակում և հրատարակում MS Office ծրագրային փաթեթի</p>			



	<p>միջոցներով</p> <p>Թեմա 4 Կառավարման տեղեկատվական համակարգերի տեսակներ: Աշխատանք MS Project ծրագրային փաթեթով:</p> <p>Թեմա 5՝ Հեռահաղորդակցական համակարգեր, դրանց կիրառությունը տնտեսության կառավարման ու կազմակերպման բնագավառում:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p>	<p><b>6. Գնահատման մեթոդներն ու չափանիշները ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին.</b></p> <p><b>6.1. Մասնակցությունը դասընթացին ( 20 միավոր)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնահատման մեթոդը՝ <ul style="list-style-type: none"> <li>- դասերին հաճախման հաշվառում:</li> </ul> </li> <li>• Գնահատման չափանիշները՝ <ul style="list-style-type: none"> <li>- ներկայություն,</li> <li>- մասնակցություն հարցերի քննարկմանը:</li> </ul> </li> </ul> <p><b>6.2 Մասնակցությունը և ակտիվությունը լաբորատոր աշխատանքներին (20 միավոր)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնահատման մեթոդը՝ <ul style="list-style-type: none"> <li>- ներգրավվածության աստիճանի հաշվում:</li> </ul> </li> <li>• Գնահատման չափանիշները՝ <ul style="list-style-type: none"> <li>- ներկայությունը,</li> <li>- տնային աշխատանքների կատարում,</li> <li>- մասնակցությունը լսարանային քննարկումներին:</li> </ul> </li> </ul> <p><b>6.4 Ստուգողական աշխատանք (212աշխ., ընդհանուր գնահատականի 20 % կամ 20 միավոր )</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնահատման մեթոդը՝ <ul style="list-style-type: none"> <li>- ստուգողական աշխատանքի գնահատում դասախոսի կողմից:</li> </ul> </li> <li>• Գնահատման չափանիշները՝ <ul style="list-style-type: none"> <li>- առաջադրված հարցերի պատասխանները,</li> <li>- առարկայի իմացությունը,</li> <li>- խնդիրների լուծումը:</li> </ul> </li> </ul> <p><b>6.5 Ինքնուրույն աշխատանք (2 աշխ., ընդհանուր գնահատականի 10 % կամ 10 միավոր )</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնահատման մեթոդը՝ <ul style="list-style-type: none"> <li>- անհատական աշխատանքի արդյունքում լուծված խնդիրների պաշտպանություն:</li> </ul> </li> <li>• Գնահատման չափանիշները՝ <ul style="list-style-type: none"> <li>- անհատական աշխատանքի ներկայացում,</li> <li>- խնդիրների լուծման համար կիրառված մեթոդների և միջոցների ընտրության հիմնավորում:</li> </ul> </li> </ul>

<b>Գրականություն</b>	<p>Շ.Դ.Համբարձումյան, Ինֆորմացիոն համակարգեր և տեխնոլոգիաներ Ս.Գյուլումյան, Ա.Գալանտերյան, Մ.Պողոսյան, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ, Երևան Ս Է Կոստեմյան, Ա Ժ Սմբատյան, Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Երևան Լրացուցիչ Т. П. Барановская - Информационные системы и технологии в экономике</p>
----------------------	---